«ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների համար

ԵՐԵՎԱՆ - 2009

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Իրավունքի հիմունքներ» առարկայի ծրագիրը նախատեսված է միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար:

Առարկայի նպատակն է՝ նպաստել միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորողների իրավական գիտելիքների աճին, նրանց իրավագիտակցության զարգացմանը, ՀՀ քաղաքացուն անհրաժեշտ իրավական պատկերացումների և արժեքային համակարգի ձևավորմանը: «Իրավունքի հիմունքներ» առարկայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պատկերացում կունենա ՀՀ Սահմանադրության, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների, պարտականությունների մասին:

Իրավական գիտելիքները որպես միջին մասնագիտական կրթության կարևոր բաղադրիչ հնարավորություն կտան տարբերակել իրավունքի հետ առնչվող խնդիրները, հասկանալ դրանց իրավական ու ոչ իրավական լուծումների տարբերությունը, յուրացնել ու գնահատել օրենքների և օրինականության նշանակությունը, ի վերջո՝ դառնալ իրավագիտակից, օրինապաշտ և ակտիվ քաղաքացիներ:

«Իրավունքի հիմունքներ» ծրագրում ներառված են՝ առարկայի բովանդակությունն ըստ բաժինների, թեմաների, յուրաքանչյուր թեմայից սովորողների գիտելիքներին և կարողություններին ներկայացվող պահանջները, թեմատիկ պլանավորում, մեթոդական ուղեցույց՝ դասավանդման նախընտրելի մեթոդների նկարագրությամբ: Թեմատիկ պլանավորումը դասավանդողին առաջարկվող ժամաբաշխման երաշխավորելի տարբերակ է: Անհրաժեշտության դեպքում դասավանդողը կարող է փոփոխություններ կատարել դրանում:

«Իրավունքի հիմունքներ» առարկային հատկացված է ընդամենը 36 ժամ, որից 30 ժամը կազմում է ծրագրի պարտադիր բաղադրիչը, իսկ 6 ժամը բաշխվում է ըստ մասնագիտական ուղղվածության (հումանիտար, տեխնիկական, տեխնոլոգիական և այլն):

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»
ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

Ներածություն

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
ԹԵՄԱ 1. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

- Հասարակություն. հասկացությունը, հատկանիշները, կառուցվածքը, զարգացման փուլերը:
- Հասարակությունը և իշխանությունը: Սոցիալական կարգավորում, կարգուկանոն:
- Պետության և հասարակության հարաբերակցությունը:
- Պետության ծագման պատճառները և ձևերը: Պետության առաջացման և հասկացողության տեսությունների բնութագիրը:
- Պետության հասկացությունը, հատկանիշները, էությունը, սոցիալական նշանակությունը:
- Պետության գործառույթներ. հասկացությունը, նշանակությունը, դասակարգումը: Պետության հիմնական ներքին և արտաքին գործառույթների բնութագիրը:
- Պետության ձև. հասկացությունը և տարրերը:
- Պետության մեխանիզմի հասկացությունը, կառուցվածքը: Պետական մարմիններ. հասկացությունը, դասակարգումը: Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքները:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- իմանա, թե ինչ է հասարակությունը, նրա հիմնական հատկանիշները
- բացատրի պետության ծագման պատճառները
- բնութագրի պետություն հասկացությունն ու նրա հիմնական հատկանիշները
- պատկերացում կազմի պետության հիմնական գործառույթների մասին
- սահմանի «պետության ձև» հասկացությունը
- պատկերացում ունենա պետության մեխանիզմի, կառուցվածքի, պետական մարմինների մասին:

ԹԵՄԱ 2. ԻՐԱՎՈՒՆՔ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՁԵՎԵՐԸ (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ)

- Իրավունք հասկացության իմաստները: Օբյեկտիվ իմաստով իրավունքի հասկացությունը: Իրավահասկացողության տիպերը:

- Իրավունքի հատկանիշները: Իրավունքի սոցիալական առաքելությունը և նշանակությունը:
- Իրավունքի սկզբունքների հասկացությունը և տեսակները: Իրավունքի սկզբունքների նշանակությունը: Իրավունքի ընդհանուր սկզբունքները:
- Իրավունքի նորմ. հասկացությունը և կառուցվածքը:
- Իրավունքի «ձև» և «աղբյուր» հասկացությունները: Իրավունքի ձևերի դասակարգումը. իրավական սովորույթ, իրավական նախադեպ, նորմատիվ իրավական ակտ:
- Նորմատիվ ակտերի հասկացությունը և տեսակները: Օրենքները. հասկացությունը, հատկանիշները, տեսակները: Սահմանադրությունը որպես պետության հիմնական օրենք: Ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր. հասկացությունը, հատկանիշները, տեսակները:
- Նորմատիվ ակտերի գործողությունը տարածության և ժամանակի մեջ, ըստ անձանց շրջանակի: Օրենքի հետադարձ ուժը:
- Իրավունքի աղբյուրները ՀՀ-ում: ՀՀ միջազգային պայմանագրերը, ՀՀ նորմատիվ իրավական ակտերը, գործարար շրջանառության սովորույթները: Իմպերատիվ և դիսպոզիտիվ իրավական նորմերը և հասարակական հարաբերությունների կարգավորման հարթությունները:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի իրավունք հասկացությունը
- բնութագրի իրավունքի էությունը և հատկանիշները
- պատկերացում կազմի իրավունքի նորմի մասին, բացատրի իրավունքի նորմի կառուցվածքը
- սահմանի իրավունքի «ձև» և «աղբյուր» հասկացությունները
- մեկնաբանի իրավական սովորույթը, իրավական նախադեպը, նորմատիվ իրավական ակտը
- բնութագրի նորմատիվ ակտերի տեսակները
- սահմանի օրենք հասկացությունը
- ներկայացնի օրենքի հատկանիշները, բնութագրի ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը
- պատկերացում կազմի ՀՀ-ում իրավունքի աղբյուրների վերաբերյալ:

ԹԵՄԱ 3. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՈՒՄԸ

- Իրավական կարգավորման կառուցակարգը (մեխանիզմը). հասկացությունը և հիմնական տարրերը: Իրավական կարգավորման կառուցակարգի փուլերը:
- Իրավահարաբերություններ. հասկացությունը, տարրերը, ծագման նախադրյալները: Իրավունքի սուբյեկտներ. հասկացությունը, տեսակները, իրավունակությունը և գործունակությունը: Իրավասուբյեկտություն:

- Իրավունքի իրացումը և դրա ձևերը: Իրավունքի կիրառումը և դրա փուլերը: Իրավունքի կիրառման ակտերը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- բնութագրի իրավական կարգավորման կառուցակարգը և նրա հիմնական տարրերը
- սահմանի իրավահարաբերություններ հասկացությունը
- իմանա իրավունքի սուբյեկտները, տարբերի դրանց տեսակները
- իմանա, թե ինչ է իրավունակությունը, գործունակությունը, իրավասուբյեկտությունը:

ԹԵՄԱ 4. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

- Իրավունքի համակարգ հասկացությունը, հատկանիշները (միասնությունը, օբյեկտիվությունը, տարբերակումը): Իրավունքի համակարգի և օրենսդրության համակարգի հարաբերակցությունը:
- Իրավական կարգավորման առարկան և մեթոդը որպես իրավունքի համակարգը տարրերի տարբերակելու հիմք: Իրավական կարգավորման մեթոդները:
- Իրավունքի համակարգի հիմնական տարրերը. իրավունքի ճյուղ, իրավական ինստիտուտ, իրավական նորմ:
- Հանրային և մասնավոր իրավունք: Նյութական և վարույթային իրավունք:
- Միջազգային և ազգային իրավունք:
- Միջազգային իրավունքի հասկացությունը, առանձնահատկությունները: Միջազգային և ազգային իրավունքի հարաբերակցությունը և փոխգործությունը:
- Միջազգային իրավունքի աղբյուրները:
- Միջազգային իրավունքի համակարգը, հիմնական սկզբունքները, սուբյեկտները:
- Հայաստանի իրավական համակարգի ընդհանուր բնութագիրը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- պատկերացում կազմի իրավունքի համակարգի, նրա հատկանիշների մասին
- իմանա իրավական կարգավորման առարկան և մեթոդը
- բնութագրի իրավունքի համակարգի հիմնական տարրերը՝ իրավունքի ճյուղ, իրավական ինստիտուտ
- տարբերակի հանրային և մասնավոր իրավունքը, նյութական և վարույթային իրավունքը, միջազգային և ազգային իրավունքը
- ներկայացնի ՀՀ իրավական համակարգը:

ԹԵՄԱ 5. ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎԱՉԱՓ ՎԱՐՔԱԳԻԾ, ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- Օրինականության հասկացությունը և սկզբունքները: Օրինականության երաշխիքները: Իրավակարգի հասկացությունը, արժեքը, անհրաժեշտությունը: Իրավակարգ և հասարակական կարգ:
- Իրավաչափ վարգագիծ. հասկացությունը և տեսակները:
- Իրավախախտում. հասկացությունը, հատկանիշները, տեսակները: Իրավախախտման իրավաբանական կազմը:
- Իրավաբանական պատասխանատվություն:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի օրինականություն և իրավակարգ հասկացությունները
- վերլուծի օրինականության հիմնական սկզբունքները
- տարբերակի իրավակարգը հասարակական կարգից
- սահմանի «իրավաչափ վարքագիծ» և «իրավախախտում» հասկացությունները
- ներկայացնի իրավախախտման հիմնական հատկանիշները և տեսակները, սահմանազատի հանցանքը այլ իրավախախտումներից
- պատկերացում կազմի իրավաբանական պատասխանատվության մասին, վերլուծի իրավաբանական պատասխանատվության հիմքերը և տեսակները:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ. ՀՀ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ

2.1. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԹԵՄԱ 6. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

- Սահմանադրական իրավունք. հասկացությունը, առարկան, աղբյուրները:
- Սահմանադրություն. հասկացությունը, բովանդակությունը, ընդունման և փոփոխման կարգը:
- ՀՀ Սահմանադրությունը, նրա կառուցվածքը, առանձնահատկությունները, ընդունման և փոփոխման կարգը:
- Սահմանադրական կարգ. հասկացությունը և սկզբունքները:
- Պետական իշխանության կազմակերպման սկզբունքները:
- Պետության և անհատի փոխհարաբերության հիմունքները Հայաստանի Հանրապետությունում:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- իմանա «սահմանադրական իրավունք» հասկացությունը, նրա կարգավորման առարկան և աղբյուրները
- ներկայացնի սահմանադրություն հասկացությունը, նրա կառուցվածքը, ընդունման և փոփոխման կարգը
- բնութագրի սահմանադրական կարգի հիմունքները
- պատկերացում կազմի պետական իշխանության կազմակերպման սկզբունքների վերաբերյալ
- մեկնաբանի պետության և անհատի փոխհարաբերության հիմունքները ՀՀ-ում:

ԹԵՄԱ 7. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԸ, ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

- ՀՀ պետական կառավարման ձևի առանձնահատկությունները:
- ՀՀ Ազգային ժողովը (պառլամենտը) որպես ներկայացուցչական և օրենսդիր մարմին: Ազգային ժողովի կազմավորման կարգը, կառուցվածքը, իրավասությունը և գործունեության կարգը:
- Պատգամավորի իրավական կարգավիճակն ըստ Սահմանադրության:
- ՀՀ նախագահի ընտրության կարգը, իրավասությունը և փոխհարաբերությունը այլ պետական մարմինների հետ:
- Գործադիր իշխանության համակարգը և դրա իրականացման կառուցակարգը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- պատկերացում կազմի պետական կառավարման ձևի մասին, ներկայացնի պետական կառավարման ձևի առանձնահատկությունները
- ներկայացնի ՀՀ Ազգային ժողովը որպես ներկայացուցչական և օրենսդիր մարմին
- իմանա Ազգային ժողովի կազմավորման կարգը, կառուցվածքը և իրավասությունը, պատգամավորի իրավական կարգավիճակը
- ներկայացնի ՀՀ Նախագահի ինստիտուտը
- բնութագրի ՀՀ գործադիր իշխանության համակարգը
- վերլուծի ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանության փոխհարաբերությունները:

ԹԵՄԱ 8. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ

- Իշխանությունների տարանջատման սկզբունքը և դատական իշխանությունը: Դատական իշխանության իրականացման ձևերը: Դատական իշխանության սահմանադրական հիմունքները ՀՀ-ում: Դատավորների իրավական կարգավիճակի սահամանադրական հիմունքները:
- ՀՀ դատական համակարգը: ՀՀ սահմանադրական դատարանը:
- Ընդհանուր իրավասության դատարանների համակարգը ՀՀ-ում:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- պատկերացում ունենա ՀՀ դատական համակարգի մասին
- ներկայացնի ՀՀ սահմանադրական դատարանի դերը և լիազորությունները
- պատկերացում կազմի դատական իշխանության գործունեության սկզբունքների վերաբերյալ
- իմանա դատավորների իրավական կարգավիճակի սահմանադրական հիմունքները
- վերլուծի իշխանությունների տարանջատման սկզբունքը:

2.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԹԵՄԱ 9. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

- Քաղաքացիական իրավունքի հասկացությունը, կարգավորման առարկան, աղբյուրները և սկզբունքները:
- Քաղաքացիները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ:
- Իրավաբանական անձ. հասկացությունը, հատկանիշները, տեսակները: Առևտրային իրավաբանական անձինք և ոչ առևտրային իրավաբանական անձինք:
- Իրավաբանական անձի իրավասուբյեկտությունը: Իրավաբանական անձի հիմնադիր փաստաթուղթը: Իրավաբանական անձի պարտադիր պետական գրանցումը:
- Իրավաբանական անձի անհատականացումը: Իրավաբանական անձի արտադրանքի անհատականացումը:

- Իրավաբանական անձի գործունեության դադարումը. վերակազմակերպումը և լուծարումը: Իրավաբանական անձի վերակազմակերպման եղանակները:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի քաղաքացիական իրավունքի հասկացությունը
- պատկերացում կազմի քաղաքացիական իրավունքի առարկայի, աղբյուրների և սկզբունքների վերաբերյալ
- բնութագրի քաղաքացիներին որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ
- սահմանի «իրավաբանական անձ» հասկացությունը
- վերլուծի իրավաբանական անձի հիմնական հատկանիշները, տարբերակի իրավաբանական անձանց տեսակները
- իրավաբանական անձի արտադրանքի անհատականացումը
- իմանա իրավաբանական անձի հիմնադիր փաստաթուղթը
- վերլուծի իրավաբանական անձի գործունեության դադարումը, վերակազմակերպումը և լուծարումը:

ԹԵՄԱ 10. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ

- Գործարք. հասկացությունը, տեսակները, ձևը: Վավեր և անվավեր գործարքներ:
- Ներկայացուցչություն և լիազորագիր:
- Հայցային վաղեմություն. հասկացությունը, կասեցումը, ընդհատումը, վերականգնումը: Պահանջները, որոնց վրա հայցային վաղեմություն չի տարածվում:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի գործարք հասկացությունը
- տարբերակի գործարքի տեսակները
- իմանա գործարքի կնքման ձևը, գործարքի վավերության պայմանները, գործարքի անվավերության հիմքերը
- վերլուծի ներկայացուցչության հասկացությունը և տեսակները
- սահմանի լիազորագիր հասկացությունը, տարբերակի լիազորագրերի տեսակները
- բացատրի հայցային վաղեմության հասկացությունը և նշանակությունը:

ԹԵՄԱ 11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- Պարտավորության հասկացությունը և կողմերը:
- Պարտավորություններ կատարելը: Պարտավորությունների կատարման ապահովումը:
- Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար:
- Պարտավորությունների դադարումը:

- Պայմանագրային և արտապայմանագրային պարտավորություններ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի պարտավորություն հասկացությունը, տարբերակի պարտավորության կողմերը, պայմանագրային և արտապայմանագրային պարտավորությունները
- վերլուծի պարտավորությունեների պատշաճ կատարման պայմանները
- իմանա պարտավորությունների կատարման ապահովման եղանակները և դադարման ընդհանուր հիմքերը, պարտավորությունների չկատարման և ոչ պատշաճ կատարման համար սահմանվող պատասխանատվության մասին:

ԹԵՄԱ 12. ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Քաղաքացիաիրավական պայմանագիր հասկացությունը: Պայմանագրային իրավունք:
- Պայմանագրի ազատությունը որպես քաղաքացիական իրավունքի սկզբունք և նրա բովանդակությունը: Պայմանագրի և օրենքի հարաբերակցությունը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի պայմանագիր հասկացությունը
- ներկայացնի պայմանագրի ազատությունը որպես քաղաքացիական իրավունքի սկզբունք
- բնութագրի պայմանագրի և օրենքի հարաբերակցությունը:

ԹԵՄԱ 13. ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

* Քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու հասկացությունը: Նախապայմանագրային բանակցությունները և դրա փուլերը:
* Օֆերտա և ակցեպտ:
* Պայմանագիր կնքելու պահի և վայրի իրավական նշանակությունը: Ռեալ պայմանագրերի կնքման պահը: Պետական գրանցման ենթակա պայմանագրերի կնքման պահը: Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահը: Պայմանագրի գործողության ավարտը:
* Ազատ և պարտադիր պայմանագրեր:
* Նախնական պայմանագիր. հասկացությունը և ձևը: Մտադրությունների մասին համաձայնության, բանակցությունների արձանագրության իրավական նշանակությունը:
* Քաղաքացիական պայմանագիր կնքելը աճուրդով (սակարկություն և մրցույթ):
* Հրապարակային պայմանագիր հասկացությունը: Հրապարակային պայմանագրի հատկանիշները:
* Միանալու պայմանագիր. հասկացությունը, հատկանիշները: Միանալու պայմանագրի լուծման կամ փոփոխման լրացուցիչ հիմքերը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- բացատրի պայմանագիր կնքելու պայմանները
- իմանա նախապայմանագրային բանակցությունների, դրա փուլերի մասին
- տարբերակի օֆերտա և ակցեպտ հասկացությունները
- վերլուծի պայմանագիր կնքելու պահի և վայրի իրավական նշանակությունը
- իմանա ռեալ պայմանագրերի կնքման պահը, պայմանագրի ուժի մեջ մտնելու պահը, պայմանագրի գործողության ավարտը
- տարբերակի ազատ և պարտադիր պայմանագրերը
- իմանա աճուրդով կնքվող պայմանագրերի մասին (սակարկություն և մրցույթ)
- սահմանի հրապարակային պայմանագիր հասկացությունը, իմանա նրա հատկանիշները:

ԹԵՄԱ 14. ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ. ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՁԵՎԸ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

- Պայմանագրային հարաբերությունների մասնակիցների կազմը, բովանդակությունը, ձևը: Պայմանագրի բովանդակություն հասկացությունը: Օրենքի և պայմանագրի պայմանների հարաբերակցությունը:
- Պայմանագրի ձևին ներկայացվող պահանջները: Պայմանագրի (գործարքի) օրենքով սահմանված ձևի չպահպանման հետևանքները:
- Պայմանագրի մեկնաբանման կանոնների իրավական նշանակությունը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված պայմանագրի պայմանների մեկնաբանման եղանակները:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- իմանա պայմանագրի մասնակիցների կազմը
- վերլուծի պայմանագրի բովանդակությունը
- իմանա պայմանագրի ձևին ներկայացվող պահանջները, օրենքով սահմանված ձևի չպահպանման հետևանքները:

ԹԵՄԱ 15. ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ. ԿԱՏԱՐԵԼԸ, ՓՈՓՈԽԵԼԸ, ԴԱԴԱՐԵԼԸ

- Պայմանագրային իրավահարաբերության զարգացման տարբերակները:
- Պայմանագրի կատարման հասկացությունը: Պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման և իրական (բնեղենով) կատարման սկզբունքները: Պարտավորության կատարման հետևանքով պարտավորության դադարման իրավական վավերացումը. պարտքային փաստաթղթերի վերադարձ, ստացական:
- Պայմանագրային պարտավորությունը պատշաճ անձի նկատմամբ և պատշաճ անձի կողմից կատարելը: Կատարման առարկան, եղանակը, վայրը, ժամկետը, որպես պատշաճ կատարման տարրեր:

- Պայմանագրի փոփոխման և դադարման հասկացությունը: Պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու ընդհանուր հիմքերը:
- Պայմանագիրը փոփոխելու և լուծելու կարգը և հետևանքները:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- մեկնաբանի պայմանագրի կատարման հասկացությունը, պայմանագրային պարտավորությունների կատարման կատարման սկզբունքները
- իմանա պայմանագրային պարտավորության պատշաճ կատարման տարրերը (առարկան, եղանակը, վայրը, ժամկետը)
- ծանոթ լինի պայմանագիրը փոփոխելու և լուծելու ընդհանուր հիմքերին, կարգին և հետևանքներին:

2.3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԹԵՄԱ 16. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

- Աշխատանքային իրավունք հասկացությունը, առարկան, խնդիրները, սկզբունքները և աղբյուրները:
- Աշխատանքային իրավահարաբերություններ. հասկացությունը, ծագման հիմքերը, փուլերը: Աշխատողը և գործատուն որպես աշխատանքային իրավահարաբերությունների մասնակից:
- Սոցիալական գործընկերությունը աշխատանքի ոլորտում: Կոլեկտիվ պայմանագիր. հասկացությունը և մակարդակները: Կոլեկտիվ աշխատանքային վեճերի կարգավորումը: Գործադուլ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի աշխատանքային իրավունք հասկացությունը, իմանա աշխատանքային իրավունքի առարկան, խնդիրները, սկզբունքները և աղբյուրները
- ներկայացնի աշխատողին և գործատուին որպես աշխատանքային իրավահարաբերությունների մասնակիցներ
- սահմանի «կոլեկտիվ պայմանագիր» հասկացությունը, ծանոթ լինի կոլեկտիվ պայմանագրերի մակարդակներին, կոլեկտիվ աշխատանքային վեճերի կարգավորմանը
- իմանա, թե ինչ է գործադուլը:

ԹԵՄԱ 17. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

- Աշխատանքային պայմանագիր հասկացությունը: Աշխատանքային պայմանագիրը որպես համաձայնություն (կոնտրակտ): Աշխատանքային պայմանագրի տարբերությունը քաղաքացիաիրավական պայմանագրերից: Աշխատանքային պայմանագրի կողմերը: Աշ-

խատանքային պայմանագրի նշանակությունը: Աշխատանքային պայմանագրի ազատությունը:

- Աշխատանքային պայմանագրի բովանդակությունը: Աշխատանքային պայմանագրի պայմանները:
- Աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը: Աշխատանքային պայմանագրի ձևը: Աշխատանքի ընդունվելիս ներկայացման ենթակա փաստաթղթերը: Փորձաշրջան:
- Աշխատանքային պայմանագրի տեսակները. Անորոշ ժամանակով աշխատանքային պայմանագիր: Որոշակի ժամկետով պայմանագիր:
- Աշխատանքային պայմանագրի կատարումը և փոփոխումը: Այլ աշխատանքի փոխադրումը և աշխատանքի չթույլատրելը:
- Աշխատանքային պայմանագրի դադարում, լուծում, արձակում: Աշխատանքային պայմանագրի դադարման ընդհանուր հիմքերը: Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ: Աշխատանքային պայմանագրի դադարման այլ հիմքերը: Վերջնահաշվարկի կարգը:
- Աշխատաժամանակ, հանգստի ժամանակ, աշխատավարձ:
- Աշխատանքային վեճեր. հասկացությունը, քննող մարմինները:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի աշխատանքային պայմանագիր հասկացությունը
- տարբերակի աշխատանքային պայմանագիրը քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից
- իմանա աշխատանքային պայմանագրի տեսակները
- պատկերացում կազմի աշխատանքային պայմանագիր կնքելու կարգի և ձևի մասին
- տեղյակ լինի աշխատանքի ընդունման ժամանակ պահանջվող փաստաթղթերի և փորձաշրջանի մասին:

2.4. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԹԵՄԱ 18. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Ընտանեկան իրավունք. հասկացությունը, կարգավորման առարկան, աղբյուրները և սկզբունքները:
- Ամուսնության կնքումը, պայմանները և կարգը: Ամուսնության դադարումը, հիմքերը և կարգը: Ամուսնության անվավերությունը:
- Ամուսինների անձնական իրավունքներն ու պարտականությունները: Ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները: Ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները:

- Երեխաների սերման փաստի հաստատումը: Երեխաների իրավունքները: Ծնողների իրավունքներն ու պարտականությունները: Ընտանիքի անդամների ալիմենտային պարտավորությունները:
- Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դաստիարակության ձևերը: Որդեգրում, խնամակալություն, հոգաբարձություն, ընտանիք:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի «ընտանեկան իրավունք» հասկացությունը, պատկերացում կազմի ընտանեկան իրավունքի կարգավորման առարկայի, աղբյուրների, սկզբունքների վերաբերյալ
- իմանա ամուսնություն կնքելու պայմաններն ու կարգը, ամուսնության դադարումը և անվավերությունը
- վերլուծի ամուսինների անձնական և գույքային իրավունքներն ու պարտականությունները, ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները
- պատկերացում կազմի որդեգրում, խնամակալություն, հոգաբարձություն, ընտանիք հասկացությունների վերաբերյալ:

2.5. ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԹԵՄԱ 19. ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԻԺ

- Քրեական իրավունք. հասկացությունը, կարգավորման առարկան, համակարգը, աղբյուրները, խնդիրները և սկզբունքները:
- Հանցագործություն. հասկացությունը և հատկանիշները: Հանցագործությունների առանձին տեսակները:
- Հանցակազմի հատկանիշները. օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ:
- Ավարտված և անավարտ հանցագործություններ: Հանցակցություն. հասկացությունը և տեսակները:
- Արարքի հանցավոր բնույթը բացառող հանգամանքներ:
- Պատժի հասկացությունը և նպատակները: Պատիժների համակարգը: Պատժի նշանակումը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- բնութագրի «քրեական իրավունք» հասկացությունը
- պատկերացում կազմի քրեական իրավունքի կարգավորման առարկայի, խնդիրների, աղբյուրների, սկզբունքների վերաբերյալ

- սահմանի հանցագործություն հասկացությունը, իմանա հանցագործության հատկանիշները
- տարբերակի հանցագործությունների առանձին տեսակները
- բացատրի հանցակազմի հատկանիշները (օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ)
- իմանա պատժի հասկացությունը և նպատակները, պատժի նշանակումը:

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ. ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԹԵՄԱ 20. ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

- Քրեական դատավարություն և քրեական դատավարության իրավունք: Քրեական դատավարության իրավունքի աղբյուրները: Քրեադատավարական գործառույթներ:
- Քրեական դատավարության սկզբունքները. հասկացությունը և նշանակությունը:
- Քրեական դատավարության սուբյեկտները:
- Ապացուցման հասկացությունը և նպատակը: Ապացուցման սուբյեկտները: Ապացուցման պարտականություն: Ապացույցների տեսակները:
- Դատավարական հարկադրանքի միջոցները և տեսակները: Ձերբակալում: Խափանման միջոցներ:
- Քրեական դատավարության համակարգը և փուլերը: Քննչական գործողություններ: Մինչդատական վարույթ և դատական վարույթ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- բացատրի «քրեական դատավարության իրավունք» հասկացությունը, իմանա քրեական դատավարության իրավունքի սկզբունքները, աղբյուրները, քրեական դատավարության սուբյեկտները
- պատկերացնի ապացուցման հասկացությունը, ապացույցների տեսակները
- տարբերակի դատավարական հարկադրանքի միջոցներն ու տեսակները
- ծանոթ լինի քրեական դատավարության փուլերին, տարբերակի մինչդատական վարույթը և դատական վարույթը:

ԹԵՄԱ 21. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

- Քաղաքացիական դատավարության հասկացությունը և փուլերը: Քաղաքացիական դատավարության իրավունքի սկզբունքները:
- Քաղաքացիական դատավարության սուբյեկտները: Կողմերը քաղաքացիական դատավարությունում: Դատական ներկայացուցչություն:
- Քաղաքացիական գործի ենթակայություն և ընդդատություն:
- Հայցային վարույթի հասկացությունը և էությունը:
- Հայց: Հայցի տեսակները և ապահովումը:

- Ապացուցելու և ապացույցներ ներկայացնելու պարտականությունը քաղաքացիական դատավարությունում: Ապացույցների առանձին տեսակները:
- Քաղաքացիական գործի հարուցումը դատարանում: Գործը դատական քննության նախապատրաստելը: Դատական քննություն: Արագացված դատաքննություն:
- Վճիռ: Դատական ակտերի կատարում:
- Հատուկ հայցային վարույթներ: Հատուկ վարույթներ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- բացատրի քաղաքացիական դատավարության հասկացությունը և փուլերը
- ներկայացնի քաղաքացիական դատավարության իրավունքի սկզբունքները, քաղաքացիական դատավարության սուբյեկտները
- պատկերացում կազմի քաղաքացիական դատավարությունում կողմերի մասին, ծանոթ լինի դատական ներկայացուցչությանը
- իմանա, թե ինչ է հայցը, հայցի տեսակները, հայցի ապահովումը
- ծանոթ լինի քաղաքացիական դատավարությունում ապացուցելու և ապացույցներ ներկայացնելու պարտականությանը
- բնութագրի և գնահատի ապացույցների առանձին տեսակները:

ԹԵՄԱ 22. ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

- Վարչական դատավարության հասկացությունը, սկզբունքները, խնդիրները, աղբյուրները:
- Վարչական գործ հասկացությունը և վարչական գործերի շրջանակը:
- Վարչական դատարանի ընդդատությունը, կազմը և ինքնաբացարկը:
- Վարչական դատավարության մասնակիցները և նրանց լիազորությունները: Ներկայացուցչությունը վարչական դատավարությունում:
- Ապացույցները և ապացուցումը վարչական դատավարությունում:
- Վարչական դատարանում գործի քննության և լուծման կարգը: Վարչական դատարանի դատական ակտերը և դրանց ուժի մեջ մտնելու ժամկետը:
- Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք և վճռաբեկ բողոք բերելու հիմքերը: Վճռաբեկ դատարանում վարչական գործերի քննության կարգը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- բացատրի վարչական դատավարության հասկացությունը, սկզբունքները, խնդիրները և աղբյուրները
- պատկերացում կազմի վարչական դատավարության մասնակիցների և նրանց լիազորությունների մասին

- իմանա վարչական գործերի շրջանակը, վարչական դատարանում գործի քննության և լուծման կարգը, վարչական դատարանի դատական ակտերը և դրանց ուժի մեջ մտնելու ժամկետը
- ծանոթ լինի վճռաբեկ բողոք բերելու հիմքերին, վճռաբեկ դասարանում վարչական գործերի քննության կարգին:

Մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն բ ա ղ ա դ ր ի չ

I. Կրթության և արվեստի ոլորտների մասնագիտությունների համար

ԹԵՄԱ 23. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ: ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- Կրթության իրավունքի իրականացման պետական երաշխիքները:
- ՀՀ կրթական համակարգը. հանրակրթություն, մասնագիտական կրթություն:
- Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն:
- Ստեղծագործության ազատության և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝
- իմանա կրթության իրավունքի իրականացման պետական երաշխիքները
- ներկայացնի ՀՀ կրթական համակարգի հիմնական բաղադրիչները, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության տեղն ու դերը կրթության ընդհանուր համակարգում
- պատկերացում կազմի ստեղծագործության ազատության և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի մասին:

II. Տնտեսագիտության ոլորտի մասնագիտությունների համար

ԹԵՄԱ 23. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Սեփականություն հասկացությունը, սեփականության իրավունքի բովանդակությունը:
- Սեփականության իրավունքի ձեռքբերման և դադարման հիմքերը:
- Իրային իրավունքի հասկացությունը և տեսակները:
- Տնտեսվարման իրավունք, օպերատիվ կառավարման իրավունք:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի սեփականություն հասկացությունը, բնութագրի սեփականության իրավունքի բովանդակությունը
- պատկերացում կազմի սեփականության իրավունքի ձեռքբերման և դադարման հիմքերի մասին
- իմանա իրային իրավունքները և նրանց տեսակները
- բացատրի տնտեսվարման իրավունք, օպերատիվ կառավարման իրավունք հասկացությունները

III. Տեխնիկական, տեխնոլոգիական, ինֆորմատիկա, որակի հսկում ոլորտների մասնագիտությունների համար

ԹԵՄԱ 23. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

- Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման նպատակը:
- Արտադրական վտանգավոր օբյեկտները և տեխնիկական անվտանգության պահանջները:
- Տեխնիկական անվտանգության ապահովման համակարգը:
- Տեխնածին վթարների, արտադրական դժբախտ դեպքերի հաշվառումը և տեխնիկական քննությունը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- իմանա տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման նպատակը
- բնութագրի արտադրական վտանգավոր օբյեկտները, ծանոթ լինի տեխնիկական անվտանգության պահանջներին
- պատկերացում կազմի տեխնածին վթարների, արտադրական դժբախտ դեպքերի հաշվառման և տեխնիկական քննության վերաբերյալ:

IV. Գյուղատնտեսության, բնապահպանության ոլորտների մասնագիտությունների համար

ԹԵՄԱ 23. ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Հողային իրավունք հասկացությունը, հողային իրավունքի առարկան, խնդիրները, աղբյուրները:
- Հողային հարաբերությունները ՀՀ-ում, ՀՀ հողային ֆոնդը:
- Գյուղատնտեսական նշանակության հողեր, գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության առանձնահատկությունները:

- Հողային վեճեր: Պատասխանատվությունը հողային օրենսդրության խախտման համար:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի հողային իրավունք հասկացությունը, պատկերացում կազմի հողային իրավունքի կարգավորման առարկայի, խնդիրների և աղբյուրների մասին
- ներկայացնի հողային հարաբերությունները ՀՀ-ում, ՀՀ հողային ֆոնդը
- վերլուծի գյուղատնտեսական նշանակության հողերի առանձնահատկությունները
- պատկերացում կազմի հողային վեճերի մասին, ծանոթ լինի հողային օրենսդրության խախտման համար սահմանվող պատասխանատվությանը:

ԹԵՄԱ 24. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Շրջակա միջավայրի պահպանության եղանակները: Բնության պահպանության իրավական եղանակի բովանդակությունը: Պետության և իրավունքի էկոլոգիական գործառույթները:
- Իրավական էկոլոգիան որպես իրավունքի ճյուղերի (բնառեսուրսային, բնապահպանական և այլն) ամբողջություն:
- էկոլոգիական իրավունքը որպես իրավունքի ճյուղ. կարգավորման առարկան, հասկացությունը: էկոլոգիական իրավունքի համակարգը: էկոլոգիական նորմերը և դրանց տեսակները:
- ՀՀ էկոլոգիական իրավունքի աղբյուրները և օբյեկտները: ՀՀ էկոլոգիական օրենսդրությունը:
- Քաղաքացիների էկոլոգիական իրավունքները:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- իմանա շրջակա միջավայրի պահպանության եղանակները, պետության և իրավունքի էկոլոգիական գործառույթները
- ներկայացնի էկոլոգիական իրավունքի աղբյուրները և օբյեկտները
- բնութագրի էկոլոգիական իրավունքի համակարգը
- պատկերացում կազմի ՀՀ էկոլոգիական օրենսդրության, քաղաքացիների էկոլոգիական իրավունքների մասին:

V. Սպասարկման ոլորտի մասնագիտությունների համար

ԹԵՄԱ 23. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- Սպառողների իրավունքների պաշտպանության հարաբերությունների իրավական կարգավորումը ՀՀ-ում:

- Ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակը:
- Սպառողի իրավունքը ապրանքի (աշխատանքի, ծառայության) անվտանգության վերաբերյալ:
- Սպառողների իրավունքների խախտման համար վաճառողի (արտադրողի, կատարողի) պատասխանատվությունը:
- Ոչ պատշաճ որակի ապրանքի վաճառքի հետևանքները:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- պատկերացում կազմի սպառողների իրավունքների պաշտպանության հարաբերությունների իրավական կարգավորման մասին
- բնութագրի ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակը
- իմանա սպառողների իրավունքների խախտման համար վաճառողի (արտադրողի, կատարողի) պատասխանատվության մասին
- վերլուծի ոչ պատշաճ որակի ապրանքի վաճառքի հետևանքները:

VI. Սպասարկման ոլորտի մասնագիտությունների համար

ԹԵՄԱ 23. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Մարդու իրավունքները բժշկական օգնության և սպասարկման իրականացման բնագավառում:
- Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, նրանց իրավունքները և պարտականությունները:
- Բժշկական օգնության և սպասարկման առանձնակի տեսակները և կազմակերպման ձևերը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է՝

- իմանա մարդու իրավունքները բժշկական օգնության և սպասարկման իրականացման բնագավառում
- պատկերացում կազմի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, նրանց իրավունքների և պարտականությունների մասին
- վերլուծի բժշկական օգնության և սպասարկման առանձնակի տեսակները և կազմակերպման ձևերը:

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

(պարտադիր բաղադրիչ՝ 30 ժամ)

Բաժին	Թեմա	Անվանումը	Տեսական	Գործնական
Բաժին I		**Պետության և իրավունքի տեսություն /10 ժամ/**	**/5 ժամ/**	**/5 ժամ/**
	1	Ներածություն: 1.Հասարակություն և պետություն	1 ժամ	1 ժամ
	2	Իրավունք. հասկացությունը, սկզբունքները, ձևերը (աղբյուրները)	2 ժամ	2 ժամ
	3, 4	3.Իրավական կարգավորման կառուցակարգը և իրավունքի իրացումը 4.Իրավունքի համակարգը	1 ժամ	1 ժամ
	5	Օրինականություն, իրավաչափ վարգագիծ, իրավախախտում, իրավաբանական պատասխանատվություն	1 ժամ	1 ժամ
Բաժին II		**ՀՀ իրավունքի համակարգի հիմնական նյութական ճյուղերը /16 ժամ/**	**/8 ժամ/**	**/8 ժամ/**
	6	ՀՀ սահմանադրական իրավունք. հասկացությունը և ընդհանուր բնութագիրը: ՀՀ սահմանադրական կարգի հիմունքները	1 ժամ	1 ժամ
	7, 8	7. ՀՀ պետական կառավարման ձևը, պետական մարմինների համակարգը 8. Դատական իշխանությունը և դատական համակարգը ՀՀ-ում	1 ժամ	1 ժամ
	9,10	9. Քաղաքացիական իրավունք. հասկացությունը, սուբյեկտները 10.Գործարքներ, ներկայացուցչություն, հայցային վաղեմություն	1 ժամ	1 ժամ
	11,12,13	11. Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին 12. Քաղաքացիաիրավական պայմա-նագիր և պայմանագրային իրավունք 13. Քաղաքացիաիրավական պայմա-նագրի կնքումը	1 ժամ	1 ժամ
	14,15	14. Քաղաքացիաիրավական պայմա-նագիր. պայմանները, ձևը և մեկնաբանումը 15. Քաղաքացիաիրավական պայմա-նագիր. կատարելը, փոփոխելը, դադարելը	1 ժամ	1 ժամ
	16,17	16. Աշխատանքային իրավունք և կոլեկտիվ պայմանագիր 17.Աշխատանքային պայմանագիր	1 ժամ	1 ժամ
	18	Ընտանեկան իրավունք	1 ժամ	1 ժամ
	19	Քրեական իրավունք. հանցագործություն և պատիժ	1 ժամ	1 ժամ
Բաժին III		**Դատավարական իրավունք /4 ժամ/**		
	20,21,22	20. Քրեական դատավարություն 21. Քաղաքացիական	2 ժամ	2 ժամ

		դատավարություն 22. Վարչական դատավարության		

(մասնագիտական բաղադրիչ՝ 6 ժամ)

Մասնագիտությունը	Թեման	Անվանումը	Տեսական	Գործնական
ա.Կրթություն:Արվեստ	23	Կրթության իրավունք: Նախնական մասնա-գիտական և միջին մասնագիտական կրթություն	4 ժամ	2 ժամ
բ.Տնտեսագիտություն	23	Սեփականության իրավունք	4 ժամ	2 ժամ
գ. Տեխնիկական, տեխնոլոգիական, ինֆորմատիկա, որակի հսկում	23	Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորումը	4 ժամ	2 ժամ
դ.Գյուղատնտեսություն, բնապահպանություն	23 24	23. Հողային իրավունք 24. էկոլոգիական իրավունք	4 ժամ	2 ժամ
ե. Սպասարկում	23	Սպառողների իրավունքների պաշտպանությունը	4 ժամ	2 ժամ
զ. Առողջապահություն	23	Առողջության պահպանման իրավունք	4 ժամ	2 ժամ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՆԵՐ

Մեթոդ հասկացությունը

Ուսուցման մեթոդը (հունարեն metodos - ճանապարհ՝ ինչ-որ տեղ, ինչ-որ բանի հասցնող) մանկավարժական գրականության մեջ բազմապիսի, երբեմն իրարամերժ բնութագրումներ է ստանում:

Ակնհայտ է, որ դժվար է սահմանել այնպիսի բարդ, բազմակողմանի հասկացություն, ինչպիսին ուսուցման մեթոդն է: Բայց եթե փորձենք ընդհանուր առմամբ բնութագրել այն, կարող ենք ասել, որ **ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և սովորողի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին:**

Ուսուցման/ուսումնառության փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդներ

«Ինտերակտիվ մեթոդներ» տերմինը կարելի է պարզաբանել հետևյալ կերպ. անգլերենում «inter»-փոխադարձ, «act»- գործողություն: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի կամ համակարգչի հետ: Այսպիսով, ինտերակտիվ ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման, սովորողի ազատության վրա:

Ինտերակտիվ ուսուցման հիմնական բնութագրիչները

Այդ բնութագրիչներից մեկը ուսուցման համապատասխան միջավայրն է, որտեղ սովորողը զգում է իր մասնակցության և անձի կարևորությունը, ինչը ուսուցման գործընթացը դարձնում է ավելի արդյունավետ: Ինտերակտիվ ուսուցման ընթացքում բոլոր սովորողներն ընդգրկվում են ուսումնառության մեջ: Ընդ որում, յուրաքանչյուրն իր անհատական ներդրումն է անում, տեղի է ունենում գիտելիքների, մտքերի փոխանակում: Ի դեպ, դա իրականացվում է բարյացակամության և փոխօգնության մթնոլորտում, որը նպաստում է ոչ միայն նոր գիտելիք ստանալուն, այլև զարգացնում է իմացական գործընթացը, այն բերելով ավելի բարձր մակարդակի՝ համագործակցային ձևի:

Ինտերակտիվը բացառում է որևէ մեկի առաջնայնությունը, գերակայությունը մյուսների, ինչպես նաև մի տեսակետի գերակշռությունը մյուսների նկատմամբ: Այսպիսի ուսուցման ընթացքում աշակերտները սովորում են քննադատաբար մտածել, տեղեկատվության վերլուծության հիման վրա բարդ խնդիրներ լուծել, ինչպես նաև քննարկել այլընտրանքային տեսակետներ, ընդունել կշռադատված որոշումներ, մասնակցել բանավեճերի և այլն:

Ինտերակտիվ ուսուցումը գործնականում կիրառելու համար կարևոր պայման է անձնական մասնակցությունը նման ոճով ուսուցմանը: Այլ կերպ ասած, ուսուցչի կողմից

ակտիվ մեթոդների յուրացումը առանց անմիջական մասնակցության անհնար է, կարելի է կարդալ մեծ քանակությամբ գրականություն ուսուցման ակտիվ մեթոդների մասին, բայց դրանք կիրառել հնարավոր է միայն անձնական փորձի շնորհիվ:

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են.

- փոխազդեցությունը, փոխուսուցումը,
- սովորողի ակտիվությունը,
- համագործակցությունը,
- ինքնարտահայտման խրախուսումը,
- հետադարձ կապը և այլն:

Համագործակցային ուսուցման հիմնական բնորոշիչները

Համագործակցային է այն ուսումնառությունը, երբ սովորողներն աշխատում են միասին՝ զույգերով կամ փոքր խմբերով որևէ ընդհանուր խնդիր լուծելու, ընդհանուր թեմա հետազոտելու կամ անհատական պատկերացումները միախառնելով՝ նոր միտք, նոր համադրույթ ստեղծելու համար: Սակայն խմբային աշխատանքն ինքնին դեռևս համագործակցային ուսումնառություն չէ:

Համագործակցային ուսուցմանն ու ուսումնառությանը հատուկ են հետևյալ բնորոշիչները.

Դրական փոխկախվածություն. Սովորողները զգում են, որ ընդհանուր առաջադրանքը կատարելու համար իրենք միմյանց կարիքն ունեն:

Անհատական հաշվետվություն. Յուրաքանչյուր սովորողի առաջադիմությունը հաճախ գնահատվում է, և ստացված արդյունքը տրվում է ինչպես սովորողին, այնպես էլ գումարվում է խմբի միավորներին:Ուսուցիչը կարող է անհատական հաշվետվության համար այս կամ այն սովորողին տալ անհատական առաջադրանք կամ պատահական ընտրությամբ՝ խմբի մի անդամին խնդրել պատասխանել ամբողջ խմբի փոխարեն: Խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է կատարված առաջադրանքը ներկայացնելու համար:

Դեմ առ դեմ փոխազդեցություն. Խմբի անդամները տեսնում են իրար, երկխոսություններ են վարում միմյանց հետ, համատեղ խնդիրներ են լուծում:

Սոցիալական հմտությունների շեշտադրում. Ուշադրության են արժանանում և զարգացվում են հաղորդակցության հմտությունները, որոնք նպաստում են խմբային աշխատանքին, օրինակ՝ լսել միմյանց, օգնել միմյանց, խրախուսել իրար: Համագործակցային հմտությունները ներառում են նաև ղեկավարումը, որոշում կայացնելը, վստահություն ձևավորելը, հակամարտության կառավարումը:

Խմբային վերլուծություն. Խմբի անդամները գնահատում, արժևորում, վերլուծում են իրենց համագործակցային աշխատանքը և առանձնացնում ձեռքբերումները:

Ինտերակտիվ առաջադրանք. Առաջադրանքի հանձնարարությունը պահանջում է սովորեցնել մյուսներին և ներառում է վերը թվարկած տարրերը:

Ուսուցման մեթոդի ընտրությունը

Մանկավարժն ազատ է մեթոդների ընտրության հարցում: Բայց այդ ընտրությունը չի կարող կամայական բնույթ կրել: Մանկավարժական գրականության մեջ առանձնացվում են ուսուցման մեթոդների ընտրության վրա ազդող մի շարք գործոններ: Թվարկենք դրանցից մի քանիսը.

- ուսուցման նպատակը, խնդիրները, բովանդակությունը,
- ուսումնական նյութի քանակը և բարդությունը,
- սովորողների պատրաստվածության մակարդակը,
- սովորողների շահագրգռվածությունը, տարիքն ու աշխատունակությունը,
- ուսումնական ժամաքանակը,
- ուսուցման նյութատեխնիկական ու կազմակերպական պայմանները,
- մյուս (նախորդ) դասերին կիրառվող մեթոդները,
- ուսումնական պարապմունքների տիպը և կառուցվածքը,
- ուսուցիչ-սովորող հարաբերությունները (ավտորիտար, համագործակցային),
- սովորողների թվաքանակը:

Ի վերջո, կարող են ծագել նաև չնախատեսված կամ անսպասելի հանգամանքներ, որոնք կթելադրեն ուսուցչին փոխել նախապես ընտրված մեթոդը՝ ստեղծված իրավիճակը շտկելու կամ հաղթահարելու նպատակով: Բոլոր դեպքերում չկա դեպի նպատակը տանող միակ ճանապարհ, և որևէ մեթոդ, եղանակ, սկզբունք, հնար չի կարող համարվել միակ ճշմարիտը:

Ավելին, առաջարկված մեթոդների կիրառման դեպքում կարող են առաջանալ դժվարություններ, մասնավորապես՝ ժամանակային առումով: Այդ դեպքում կարելի է կիրառել ոչ թե մեթոդն ամբողջությամբ, այլ դրա առանձին տարրերը : Կարելի է նաև մեթոդներն օգտագործել լրացուցիչ, նախասիրական պարապմունքների ընթացքում կամ կազմակերպել բաց դասեր, նկատի ունենալով, որ շատ մեթոդներ լուրջ նախապատրաստական աշխատանք են պահանջում:

Մեթոդներին զուգահեռ ուսումնական գործընթացում կիրառվում են մեթոդական մի շարք հնարներ: Թեև **հնարը** սովորաբար անկախ կիրառություն ունի, բայց հաճախ բնութագրվում է որպես մեթոդի տարր, բաղադրիչ, իրականացման քայլ կամ մեթոդի արտահայտչաձև (մոդիֆիկացիա):

Դասախոսություն

Դասախոսությունը ուսուցման ավանդական և հաճախ կիրառվող մեթոդներից է, և չնայած ժամանակակից մեթոդների բազմազանությանը, այսօր էլ դասախոսությունն է ձևավորում նյութի փոխանցման ակտիվ ձևերի հիմքը: Դասախոսությունը մենախոսություն է, այն տեղեկատվության, հաղորդվող նյութի բանավոր ներկայացումն է դասախոսի կողմից: Դասախոսը, ուսուցիչը տեղեկատվությունը, գիտելիքը փոխանցում է սովորողների խմբին, իսկ սովորողների խնդիրը այն լսելը, ընկալելն ու մտապահելն է: Նման գործընթացում հաղորդակցությունն ընթանում է մեկ ուղղությամբ, մեկ գծով՝ դասախոսից սովորող: Հետևաբար մենք կարող ենք ասել, որ դասախոսությունը պասիվ գործընթաց է: Դասախոսության տևողությունը պետք է համապատասխանի ունկնդիրների ուշադրության կենտրոնացմանը՝ մոտավորապես 20 րոպե: Որոշ դեպքերում այն կարող է տևել ավելի, եթե փոխվում է նյութի ներկայացման ոճը, ձևը, արագությունը, կիրառվում են դադարներ՝ նյութեր բաժանելու կամ հարց ու պատասխանի համար:

Դասախոսության ընթացքում հարկ է կիրառել մի շարք հնարներ սովորողներին ուսուցման գործընթացի մեջ առավելագույնս ներգրավելու համար: Նրանց միտքն արթուն պահելու համար անհրաժեշտ է ընտրել նյութ, որը կոգևորի ու կհետաքրքրի սովորողներին: Սովորողների կողմից նյութի ընկալումն ու յուրացումը արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է դասախոսության նյութը պլանավորել, կառուցել որոշակի հերթականությամբ, հաջորդականությամբ՝ հնարավորություն տալով սովորողներին մտածել յուրաքանչյուր քայլի մասին, ամփոփել յուրաքանչյուր հարաբերականորեն ավարտուն մաս, շեշտել և կրկնել դասախոսության հանգուցային մասերը:

Սովորողների մտածողությունը ակտիվացնելու և ուշադրությունը գրավելու գործում մեծապես կարևորվում են հատկապես հռետորական հարցերը, որոնք ոչ այնքան պատասխան են ակնկալում, որքան խթանում են դասախոսի միտքը: Նյութի մատուցման համար դասախոսը հարցադրումներ է կատարում, ապա հաջորդաբար անդրադառնում դրանց: Ցանկացած դեպքում, երբ դասախոսը դիմում է հարցերի, սովորողները որոշակիորեն արձագանքում են դրան, անգամ եթե անմիջապես պատասխանելու հնարավորություն չկա:

Ուսումնական գործընթացում սովորողների ներգրավվածությունը մեծացնելու նպատակով կարելի է ինչ-որ պահի ընդհատել դասախոսությունը և սովորողներին հարցեր ուղղել կամ զրույց ծավալել: Նման ձևով մատուցվող նյութի յուրացման մակարդակը բարձրացնում են զննական տարբեր նյութերի ու միջոցների կիրառումը՝ նկարազարդումներ, գծապատկերներ, գրաֆիկներ, գրանցումներ գրատախտակին և այլն:

Դասախոսությունն առավել աշխույժ է դարձնում նաև դասախոսի կենդանի խոսքը, առոգանությունը, ձայնի տատանումները, շեշտադրումները, դադարները, ինչպես նաև դիմախաղն ու ժեստերը:

Մեթոդի առավելությունները	Մեթոդի սահմանափակումները
1.Այն շատ լավ գործում է մեծ խմբերի հետ աշխատելիս (բոլորի հետ միաժամանակ և արագ):	1.Պասիվ ուսուցում:
2.Դասախոսության բովանդակության տրամաբանական բաժանումը հեշ-տացնում ու հասկանալի է դարձնում յուրացումը:	2.Ամրապնդման, հետադարձ կապի բացակայություն. դժվարանում է սովորողների յուրացման գնահա-տումը:
3.Ժամանակի հստակ բաշխում և վերահսկում:	3.Դասախոսի առջև դրված մեծ պատասխանատվություն. գործը գրեթե ամբողջությամբ ծանրանում է դասախոսի ուսերին:

Պ ր ի զ մ ա

Պրիզման ուսուցման և ուսումնառության ակտիվ մեթոդ է: Այն խրախուսում է սովորողներին ազատ ու անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ: Պրիզմայի հիմնական նպատակը ներկայացվող երևույթի, հասկացության, գաղափարի վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է: Պրիզմայի մեթոդը գծագրական դասակարգչի ձև ունի, այն մտածողության ընթացքը դարձնում է ակնառու ու պատկերավոր :

«Պրիզմա» մեթոդը կիրառվում է բացառապես դասի սկզբնական, խթանման փուլում՝ ապահովելով սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը, ակտիվացնելով, կապ հաստատելով սովորողների ունեցած գիտելիքների ու պատկերացումների և ուսուցանվող նոր նյութի միջև: Սրանով իսկ մեթոդի կիրառումը ապահովում է դասի հաջող մեկնարկ: Պրիզմա կարելի է կազմել նաև անհատապես, բայց առավել արդյունավետ են խմբային աշխատանքի արդյունքները: «Պրիզմա» մեթոդի կիրառումը շատ ժամանակ չի խլում, անցնում է շատ արագ և աշխույժ: Մեթոդի կիրառումը ենթադրում է հետևյալ քայլերը:

1. Ուսուցչի կողմից ասվում է այն հիմնական բառը, հասկացությունը, թեման, որը ենթակա է ուսումնասիրման:
2. Սովորողներին առաջարկվում է առանց մտածելու, անմիջապես մեկնաբառի ազդեցության տակ ասել մտքում ծագած առաջին 2 պատահական բառերը: Դրանք գրվում են գծապատկերի 2 վանդակում: Ընդ որում, գրանցվում են առաջինը հնչած բառերը:
3. Ասոցիատիվ կապերի բացահայտմանն ուղղված այս կառույցը շարունակվում է: Այս դեպքում վանդակները լրացվում են նախորդ երկու բառերի ասոցիատիվ կապերը հաշվի առնելով: Հասկացության բովանդակությունից, սովորողների տարիքային առանձնահատկություններից, նրանց թվաքանակից կախված՝ պրիզման կարող է բացվել մի քանի շերտով, բայց, թերևս, ամենաարդյունավետը 3 շերտով բացված պրիզման է:
4. Հաջորդ քայլերում նույն սկզբունքով պրիզման փակվում է: Գրանցված զույգ բառերն արդեն հավաքվում են մեկ բառի մեջ:
5. Այս ընթացքում հարկավոր է հետևել, որ հնարավորինս կանխվեն գիտակցական մակարդակում ծագած բառերի գրանցումը և խրախոսվեն ենթագիտակցության ոլորտում ծնված բառերը: Այդ մասին կարելի է անհրաժեշտության դեպքում հիշեցնել մասնակիցներին:
6. Պրիզման եզրափակվում է վերջնաբառով:
7. Պրիզմայի ամփոփիչ քայլը սկզբնաբառի և վերջնաբառի միջև տրամաբանական կապ գտնելն է, երբ այդ 2 բառերից պետք է նախադասություն, միտք կազմել: Որպես մեթոդի ստեղծագործական զարգացում, պրիզմայի արդյունքներին կարելի է անդրադառնալ նյութի ամփոփման փուլում:

Ստորև բերված է վերոհիշյալ քայլերով կատարված մի օրինակ: Նույն՝ «կրթություն» մեկնաբառով կարող են ստացվել պրիզմայի բազմաթիվ տարբերակներ:



Մ տ ք ե ր ի տ ա ր ա փ

Մտքերի տարափը կամ մտագրոհը (brainstorming) խմբային (թիմային) աշխատանքի պարզ, բայց շատ արդյունավետ մեթոդ է: Դրա գլխավոր գործառույթը մտքերի խմբավորումն է: Այս մեթոդը «մտքերի տարափ» են անվանում, քանի որ հաճախ խրախուսվում է պարզապես ուսումնասիրվող նյութի հետ այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: Խմբի անդամների առջև կոնկրետ խնդիր է դրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետը՝ առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի: Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են: Մտքերի տարափի արդյունքում գրի առնված գաղափարների վերլուծությունն այս փուլի խնդիրը չէ, դա կարվի ավելի ուշ:

Ավելին, պատկերավոր բնութագրելու համար երբեմն ասվում է, որ «մտքերի տարափ» մեթոդը կիրառելիս արտահայտված բոլոր մտքերն ու գաղափարները ընդունելի են, «սխալ» միտք չկա:

«Մտքերի տարափը» մեծապես նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը: Նշենք որոշ հանգամանքներ:

- Մեթոդը նպաստում է նոր գաղափարների ի հայտ գալուն:
- Խումբը համատեղ աշխատանքում կարող է ավելի արժեքավոր մտքեր ծնել, քան նույն պայմաններում անհատական աշխատանք կատարելով: Գաղափարների գրառումը տեղի է ունենում խմբի ակտիվ փոխազդեցության արդյունքում: Չպետք է լինի սահմանափակման որևէ դրսևորում կամ փորձ:

- Գաղափարը պահպանվում, նրա արժեզրկումը կանխվում է, երբ խումբը գտնվում է մտքերի խմբավորման վիճակում: Մտքերի հոսքը, որն առաջնային է այդ պահին, չի կարելի արգելակել արտահայտված գաղափարներին գնահատականներ տալով:
- Առհասարակ ստեղծագործական մտածողությունն անցնում է երեք փուլով
  - մտքերի խմբավորում,
  - մտքերի վերլուծություն և գնահատում,
  - մտքի կիրառում կոնկրետ իրավիճակում:

Վերոնշյալ գաղափարները հիմք են հանդիսացել «մտքերի տարափի» մեթոդով աշխատելու հետևյալ 5 կանոնի մշակման համար:

1. Ցանկացած քննադատության բացակայություն

Մտքերի ազատ հոսք կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ բացակայում է քննադատության վտանգը: Այստեղ քննադատություն է համարվում և' բացահայտ բացասական գնահատականը, և' քմծիծաղը, և' կողմնապահությունը: Չարժե ցույց տալ, որ միտքը որևէ արժեք չունի, անտեսել որևէ մեկի ներդրումը կամ արտահայտել անգամ ոչ խոսքային քննադատական վերաբերմունք (հոնքերը կիտել, ուսերը բարձրացնել և այլն):

2. Գաղափարների խրախուսում

Շեշտը պետք է դնել արտահայտվող մտքերի քանակի, այլ ոչ թե դրանց որակի վրա: Պետք է խրախուսել բազմաթիվ մտքեր արտահայտելը, հետագայում քննարկման ժամանակ հնարավորություն ստեղծելով դրանցից ցանկացածի վերաբերյալ տեսակետներ արտահայտելու համար:

3. Մասնակիցների հավասարություն

Յուրաքանչյուր մասնակից պետք է զգա, որ իր կողմից ասված միտքը արժանի է ուշադրության: Սա կդառնա մտքեր արտահայտելու շահագրգռվածության պայման: Տարափը չի ենթադրում հերթականություն կամ չափ սահմանել: Սակայն պետք է հետևել, որ չստեղծվի որևէ մեկի գերակայությանը մտքեր արտահայտելու հարցում: Կարելի է ինչ-որ հերթականության ձև մտածել, որը թեև կարող է դանդաղեցնել ընթացքը և փոքր ինչ ձևական բնույթ կրել, բայց դրա փոխարեն կապահովի բոլորի մասնակցությունը:

4. Զուգորդումների (ասոցիացիաների) ազատություն

Առավելագույն քանակի մտքեր ստանալու համար պետք չէ սահմանափակումներ դնել: Սրա հետևում թաքնված է հետևյալ տրամաբանությունը՝ միտքը, որը ոչ տեղին կամ ոչ գործնական է թվում, կարող է նպաստել ուրիշ մեկի մոտ հետաքրքիր մտքերի առաջացմանը

5. Բոլոր մտքերի գրառում

Գրառումը միայն կարևոր արտահայտությունների արձանագրումը չէ, այլև, դրանք գրանցելով, նոր մտքերի առաջացմանը նպաստելը: Այդ պատճառով պետք է բոլոր մտքերը գրանցել գրատախտակին կամ թղթի վրա, այնպես, ինչպես ասել է «հեղինակը»:

Վերածևակերպման վրա ծախսված ժամանակը կարող է խանգարել, արգելակել մտքերի տարափը կամ դանդաղեցնել այն:

«Մտքերի տարափ» մեթոդը թույլ է տայիս ազատորեն արտահայտել մտքեր, գաղափարներ, տեսակետներ: Այս մեթոդի շնորհիվ վեր են հանվում սովորողների նախնական գիտելիքները՝ այն, ինչ նրանք գիտեն կամ ենթադրում են, որ գիտեն տվյալ թեմայի, նյութի վերաբերյալ: Կշռադատման փուլում, երբ արդեն սովորողները յուրացրել են դասանյութը, անպայման անդրադարձ է կատարվում մտագրոհի արդյունքներին՝ ճշգրտելով, ուղղելով, լրացնելով, ամբողջացնելով նախնական մտքերի ու գաղափարների ցանկը: Միայն այս դեպքում է, որ սովորողի իմացական կառույցներում տեղաշարժ է կատարվում՝ ներառելով նոր տեղեկատվությունը որպես գիտելիք:

Զ ր ո ւ յ ց

Զրույցը ուսուցման առավել հին մեթոդների թվին է պատկանում: Այն վարպետորեն կիրառում էր դեռևս Սոկրատեսը:

Զրույցի, ինչպես և ուսուցման այլ մեթոդների դեպքում, իմացությունը կարող է զարգանալ դեդուկտիվ կամ ինդուկտիվ ճանապարհով: **Դեդուկտիվ** զրույցի հիմքում դրվում են աշակերտներին արդեն հայտնի ընդհանուր դրույթներ, կանոններ, սկզբունքներ, հասկացություններ, որոնց քննարկման արդյունքում նրանք հանգում են որոշակի եզրակացությունների: Զրույցի **ինդուկտիվ** ձևի դեպքում առանձին փաստերի, հասկացությունների և մասնավոր պնդումների հիման վրա սովորողները հանգում են ընդհանուր եզրակացությունների:

Մանկավարժության մեջ ընդունված տեսակետների համաձայն՝ զրույցն առավել արդյունավետ է՝

- սովորողներին դասարանական աշխատանքի նախապատրաստելիս,
- նոր դասանյութին ծանոթացնելիս,
- գիտելիքների համակարգման և ամրագրման դեպքում,
- ընթացիկ ստուգման և գիտելիքների յուրացման դիագնոստիկայի համար:

Ըստ նպատակի առանձնացվում են զրույցի հետևյալ տեսակները.

1. ներածական կամ կազմակերպական,
2. նոր գիտելիքների հաղորդման (սոկրատեսյան, էվրիստիկ և այլն),
3. ընդհանրացնող կամ ամրապնդող,
4. ստուգող - շտկող:

Ներածական զրույցը սովորաբար անցկացվում է ուսումնական պարապմունքի սկզբում: Դրա նպատակն է՝ պարզել, թե ճիշտ են արդյոք սովորողները հասկացել առաջիկա աշխատանքի իմաստը, որքանով են նրանք պատկերացնում այն: Նման զրույցները արդյունավետ են հատկապես էքսկուրսիայից, լաբորատոր և գործնական պարապմունքներից, նոր նյութի ուսումնասիրությունից առաջ:

Զրույց - հաղորդումը սովորաբար լինում է՝

- ավտորիտար–հեղինակավոր (առարկություն չընդունող հարց և պատասխան),
սոկրատեսյան (ուսուցչի նկատմամբ հարգալից, բայց ինքնուրույն կարծիք, քննադատություն, առարկություններ հանդուրժող),
- էվրիստիկ (սովորողների առաջ հիմնահարցեր դնող և ուսուցչի առաջադրած հարցերին սեփական պատասխաններ ենթադրող): Այս, ինչպես և ցանկացած այլ բնույթի զրույցի հիմնական նպատակը գիտելիքների նկատմամբ հետաքրքրության ձևավորումը և իմացական գործունեության պահանջի դաստիարակումն է:

Ընդհանրացնող կամ **ամրապնդող զրույցն** ուղղված է սովորողների գիտելիքների համակարգմանը, իսկ **ստուգող–շտկող** զրույցը կիրառվում է հայտորոշիչ (դիագնոստիկ) նպատակներով, ինչպես նաև այն դեպքում, երբ պետք է սովորողների ունեցած գիտելիքները զարգացնել, ճշգրտել և լրացնել նոր փաստերով ու դրույթներով:

Զրույցի հաջող կիրառման համար անհրաժեշտ է լրջորեն նախապատրաստվել դրան: Պետք է հստակ սահմանել զրույցի թեման, դրա նպատակը, կազմել պլան, ընտրել դիտողական պարագաներ, ձևակերպել հիմնական և օժանդակ հարցերը, որոնք կարող են առաջանալ զրույցի ընթացքում, մտածել դասը կազմակերպելու և անցկացնելու, այն է՝ հարցերի առաջադրման հերթականության, առանցքային հարցերի շուրջ տրվող ընդհանրացումների ու եզրակացությունների մասին և այլն:

Կարևոր է հարցերի ճիշտ ձևակերպումն ու հերթականությունը: Դրանք պետք է որոշակի տրամաբանական կապ ունենան, ընդհանուր առմամբ բացահայտեն ուսումնասիրվող նյութի էությունը, նպաստեն գիտելիքների համակարգված ընկալմանը: Իրենց բովանդակությամբ և ձևով հարցերը պետք է համապատասխանեն սովորողների զարգացման մակարդակին: Հեշտ, պարզունակ հարցերը չեն խթանում սովորողների ակտիվ իմացական գործունեությունը: Պետք չէ նաև տալ «հուշող»՝ պատրաստի պատասխաններ ենթադրող հարցեր:

Շատ կարևոր է նաև **հարցուպատասխանի** ճիշտ կիրառումը: Յուրաքանչյուր հարց տրվում է ամբողջ խմբին: Մտածելու համար տրված ոչ մեծ դադարից հետո միայն լսվում է սովորողներից որևէ մեկի պատասխանը: Չի կարելի խրախուսել տեղից «ճչացողներին»: Պետք չէ տալ երկարաշունչ կամ երկիմաստ հարցեր: Եթե սովորողներից ոչ մեկը չի կարողանում պատասխանել հարցին, պետք է այն վերաձևակերպել–հստակեցնել, մասնատել կամ օժանդակող–ուղղորդող հարցեր տալ: Ցանկալի չէ սովորողներին մղել թվացյալ ինքնուրույնության՝ բառեր, վանկեր կամ սկզբնատառեր հուշելով:

Զրույցի հաջողությունը կախված է լսարանի հետ հաղորդակցության աստիճանից: Պետք է հետևել, որպեսզի բոլոր սովորողները ակտիվորեն մասնակցեն զրույցին, ուշադիր լսեն հարցերը, մտածեն պատասխանի վրա, քննարկեն իրենց ընկերների պատասխանները, ձգտեն արտահայտել սեփական կարծիքը: Պատասխանները պետք է խրախուսել, անհրաժեշտության դեպքում՝ մեկնաբանել կամ շտկել: Սովորողին պետք է հնարավորություն տալ շտկել սեփական պատասխանը և միայն դրանից հետո դիմել

մյուսների օգնությանը: Ուսուցչի խրախուսմամբ սովորողները կարող են նաև իրար հարցեր տալ, բայց հենց որ դրանք կորցնում են իմացական արժեքը և ինքնանպատակ ակտիվության բնույթ են ստանում, այդ զբաղմունքը պետք է անմիջապես դադարեցնել: Զրույցը կարող է անարդյունավետ լինել, եթե աշակերտները չունեն գիտելիքների և պատկերացումների որոշակի պաշար:

Զրույցը չի կարող ուսուցման համակողմանի մեթոդ լինել և անպայման պետք է զուգակցվի դասախոսության, բանավեճի և այլ մեթոդների հետ:

Զրույցը ուսուցման ոչ խնայողական և բարդ միջոց է: Այն ժամանակ, ուժերի լարում ու համապատասխան պայմաններ է պահանջում, ինչպես նաև մանկավարժական վարպետության բարձր մակարդակ: Ընտրելով զրույցի մեթոդը, անհրաժեշտ է կշռադատել սեփական հնարավորություններն ու սովորողների պատրաստվածության մակարդակը: Այդ ամենը անհրաժեշտ է խուսափելու համար զրույցի «ձախողումից», այսինքն այն դատարկախոսության վերածելուց:

Խ ճ ա ն կ ա ր

«Խճանկար» անվանումն ինքնին բնութագրում է մեթոդը: Սովորողները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են տարբեր ուղղություններով: Խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում ամբողջ խմբի սեփականությունը: Մեթոդի առանձնահատկությունն այն է, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնատռության համար, միաժամանակ հանդես են գալիս և՝ սովորողի, և՝ սովորեցնողի դերում:

Ընթացքը

1. Թեման բաժանել առանձին հատվածների:
2. Ձևավորել 4-5 հոգանոց համագործակցային խմբեր:
3. Համագործակցային խմբերի («մայր» խմբեր) անդամներին տալ համարներ՝ 1, 2, 3, 4 …:
4. Նույն համարները կրող մասնակիցները միավորվում են նոր՝ «փորձագիտական» խմբերում (1,1 1…., 2. 2, 2… և այլն): Յուրաքանչյուր փորձագիտական խմբի տրվում է առանձին առաջադրանք (օրինակ, եթե նյութը բաժանել ենք հատվածների, փորձագետների առաջին խումը կաշխատի նյութի առաջին հատվածի վրա, 2-րդ խումբը՝ երկրորդի և այլն):
5. Սովորողները վերադառնում են «մայր» խմբեր, հաշվետվություն են տալիս իրենց «փորձագիտական» խմբի ուսումնասիրած նյութի մասին՝ հանդես գալով նաև սովորեցնողի դերում: Աշակերտներն իրենց սովորածը սովորեցնում են միմյանց, միավորվում, ամբողջացնում են գիտելիքները:
6. «Մայր խմբերը» ամբողջ դասարանին ներկայացնում են ամբողջ թեման՝ իրենց նախընտրած ձևով, 5-10 րոպեի ընթացքում:

7. Թեման ամփոփելու նպատակով ուսուցիչը կարող է տարբեր հանձնարարություններ տալ: Օրինակ՝ «Ո՞րն էր ամենակարևորը», «Համառոտ ձևակերպեք թեմայի գլխավոր գաղափարը», «Ինչի՞ վրա խումբն ամենաշատը կանգ առավ» և այլն: Այս քայլը հնարավորություն կտա նյութն ամփոփել և գնահատել տարբեր տեսանկյուններից:

Բ ա ն ա վ ե ճ

Ժամանակակից դիդակտիկայում կիրառվող մեթոդների ցանկում կարևոր տեղ ունի ուսումնական բանավեճը (դիսկուսիա, լատիներեն՝ disscussio-հետազոտություն, քննարկում): Հաճախ այն ավելի արդյունավետ է, քան մի շարք այլ մեթոդներ:

Բանավեճը, ի տարբերություն զրույցի կամ դասախոսության, բովանդակային առումով սովորաբար սահմանափակվում է *մեկ առանձին թեմայով* կամ հիմնահարցով և կառուցվում է *որոշակիորեն սահմանված կարգով*: Բանավեճի ընթացքում բացառվում է խոսողին ընդհատելը. այստեղ խիստ կարևորվում է յուրաքանչյուրի կարծիքն ու հայացքները և հարգալից վերաբերմունքը մյուսների կարծիքի նկատմամբ: Թեպետ շատ դեպքերում բանավեճը կարող է զգացմունքային բնույթ կրել, այն երբեք վեճի չպետք է վերածվի: Այլ կերպ ասած՝ բանավեճը չպետք է վիճաբանություն դառնա: Բանավեճը կարող է բնականոն ընթացք ունենալ այն դեպքում միայն, երբ բոլոր մասնակիցները ձգտում են հասնել առաջադրված ընդհանուր նպատակին:

- Ուսումնական բանավեճի գլխավոր նպատակը իմացական հետաքրքրության խթանումն է:
- Բանավեճն ուղղված է սովորողների կողմից նոր գիտելիքների ձեռքբերմանը, սեփական կարծիքի ամրապնդմանը, այն պաշտպանելու կարողության զարգացմանը:
- Ձիջելով զրույցին կամ դասախոսությանը տեղեկատվության հաղորդման արդյունավետության առումով, բանավեճը բարձր արդյունավետություն է հանդես բերում տեղեկատվության ամրապնդման, ուսումնասիրվող նյութի ստեղծագործական ընկալման և արժեքային կողմնորոշման ձևավորման հատկանիշներով:

Ընթացքը

Բանավեճի անցկացման ընթացքում ուսուցչի մասնակցությունը կարգադրիչ դիտողությունների կամ սեփական տեսակետների արտահայտման բնույթ չստանա: Բովանդակային առումով ուսուցչի ունեցած հիմնական գործիքն այստեղ հարցերն են: Հարցերի ճիշտ կիրառում և ընթացիկ քննարկման առանցքային կողմերի գրանցում գրա-տախտակին - ահա առաջին հայացքից ոչ բարդ հնարները, որոնք սովորաբար կիրառում է փորձառու ուսուցիչն այս դեպքում: Կարևոր է, սակայն, հարցերի բնույթը: Երբեմն

հարցը, որ տրվել է քննարկումը խթանելու համար, կարող է նաև հակառակ արդյունքն ունենալ: Այդ պատճառով փորձառու ուսուցիչներն այդ դեպքում նախընտրում են չմիջամտել, *դադար տալ*՝ սովորողներին մտածելու հնարավորություն տալու համար: Ելակետային ոչ ճիշտ հասկացությունները կամ փաստական տեղեկությունները կարիք չկա խորացնել նոր հարցադրումներով: Այդ դեպքում ավելի արդյունավետ է ուսուցչի բացատրող, տեղեկացնող, բայց և միաժամանակ՝ հակիրճ խոսքը: Հաճախ կիրառվող միջոցներից է նաև սովորողի խոսքի, մանավանդ եթե այն հստակորեն չի ձևակերպված, համառոտ *վերաշարադրանքը*: Ոչ ճիշտ արտահայտություններին կամ պնդումներին պետք է անպայման անդրադառնալ, պահպանելով մանկավարժական տակտը:

Եվս մեկ, նախընտրելի մեթոդական միջոց է սկսած *միտքը շարունակելու առաջարկը*, մանավանդ եթե այն ձևակերպվում է անուղղակիորեն («ինձ թվում է, հարցի քննարկումը կարելի է շարունակել նաև հետևյալ ուղղությամբ…», «դա ճիշտ է իհարկե, բայց կարելի է դիտել նաև այս առումով…:»): Այդ դեպքում ոչ միայն ելույթ ունեցողն է ձգտում ավելի ամբողջական ու բազմակողմանի ներկայացնել իր տեսակետը, այլև ավելի է մեծանում լսարանի հետաքրքրությունը քննարկվող հարցի նկատմամբ, քան ուսուցչի ուղղակի հարցերին սովորողների կողմից տրվող պատասխանների դեպքում: Ուսումնական բանավեճն ընդհանրապես պետք է անցկացվի բարյացակամության և յուրաքանչյուր մասնակցի նկատմամբ ուշադրության մթնոլորտում:

Բանավեճի ամփոփումը

Բանավեճի ընթացքում և տվյալ ուսումնական պարապմունքի ավարտին ուսուցիչը սովորաբար որևէ կերպ ամփոփում է բանավեճի արդյունքները: Այդ ամփոփումը կարող է հետևյալ ձևակերպումն ունենալ.

- հիմնական թեմայի վերաբերյալ ասվածի ամփոփում,
- ներկայացված տվյալների, փաստական տեղեկությունների վերաբերյալ ընդհանուր ակնարկ,
- բանավեճի ընթացիկ քննարկում,
- մինչ այդ արված եզրակացությունների վերաձևակերպում, վերաշարադրանք,
- հանրագումար, ակնարկ այն ամենի մասին, ինչն արդեն քննարկվել է,
- հարցեր, որոնք հետագա քննարկման կարիք ունեն:

Ամփոփումը պետք է լինի հակիրճ, բովանդակալից և հնարավորինս ամբողջականորեն արտահայտի ներկայացված բոլոր տեսակետները: Միաժամանակ, այն պետք է ելակետային լինի հաջորդ թեմայի ոուսումնասիրության համար:

Բանավեճի անցկացման կանոններ

- Ցանկացած միտք, արտահայտություն, պնդում պետք է հիմնավորվի փաստերով:
- Յուրաքանչյուր մասնակից պետք է արտահայտվելու հնարավորություն ունենա:
- Պետք է խոսել կարճ և քննարկումը չդարձնել որևէ մեկի մենաշնորհը:

- Ամեն մի դիտողություն, տեսակետ պետք է ուշադրությամբ ուսումնասիրվի:
- Քննարկման ընթացքում անթույլատրելի է անձը վիրավորելը, պիտակավորելը, վիրավորական խոսքերը և վարքագծի նմանատիպ այլ դրսևորումները:

Ելույթները պետք է կազմակերպված բնույթ կրեն, յուրաքանչյուր մասնակից

- կարող է խոսել միայն նախագահողի (վարողի) թուլտվությամբ, կրկնակի ելույթները կարող են լինել հիմնական ելույթներից հետո, անթույլատրելի է «լեզվակռիվը» մասնակիցների միջև:

Գնահատվող բանավեճ

Գնահատվող բանավեճը նման է խճանկարի, որի յուրաքանչյուր մասնիկը

Դերային խաղ

Դերային խաղը ուսման կամ փորձի հարստացման միջոց է խմբի մասնակիցներին անսպասելի իրավիճակներ առաջարկելու ձևով, որոնցում անհրաժեշտ է ընդունել որևէ դեր կամ տեսակետ, այնուհետև փորձել դա հասունացնել և ավարտել:

- Դերային խաղից մեծ օգուտ քաղելու համար պետք է առաջարկվող իրավիճակները հնարավորինս մոտ լինեն իրականությանը: Անհրաժեշտ է բավարար ժամանակ տրամադրել դերային խաղում ներգրավված դերերը (կերպարները) նկարագրելու համար և համոզվել, որ խաղի համար ստեղծված պայմանները առավելագույնս համապատասխանում են մասնակիցների հիմնական գործունեությանը:
- Դերային խաղի հրահանգում պետք է մանրամասն նկարագրվի իրավիճակը: Հրահանգը պետք է խիստ սահմանափակումներ չունենա, որպեսզի չխանգարի մասնակիցներին այդ դերը խաղալ իրենց պատկերացումներին համապատասխան: Դերային խաղը կարող է ունենալ հստակ կառուցվածք կամ լինել ազատ:
- Խնդիրը, որի լուծման վրա աշխատում են դերային խաղի մասնակիցները (կարող են մասնակցել մեկ կամ մի քանի հոգի), կոնկրետ մարդկանց առօրյա կյանքին բնորոշ վարքային մոդելի ստեղծումն է:
- Անհրաժեշտ է նշել, որ դերային խաղից հետո քննարկման առարկա է դառնում մասնակիցների վարքը, ոչ թե նրանց ընդունակությունները:
- Դերային խաղի կիրառման ընթացքում խումբը պետք է հետևի այդ խաղի ընթացքին: Նա, ով չի մասնակցում խաղին, դիտորդի դեր է կատարում. նշումներ է անում դերային խաղի մասնակիցների վարքի վերաբերյալ: Խաղի ավարտը որոշում է ուսուցիչը:

- Դերային խաղն օգտակար է, երբ փորձում են ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ տարբեր կարծիքներ ունեն: Ցանկալի է ընտրել հետաքրքիր թեմաներ, որպեսզի խաղին մասնակցողները կարողանան ներկայացնել տարբեր տեսակետներ:

Խորհուրդներ անցկացման վերաբերյալ

- Մշակել մանրակրկիտ պլան

Դերային խաղի գրագետ իրականացումը մեծ օգուտ է բերում մասնակիցներին: Այն ցանկալի է անցկացնել դասի միջնամասում, երբ խումբը պատրաստ է հաղթահարել դասի սկզբին բնորոշ դիմադրությունը:

- Դերային խաղը անցկացնել տեղին

Դերային խաղի արդյունավետությունը պայմանավորված է նրա կենսականությամբ և նոր ապրումներով: Դա նշանակում է, որ մեթոդը պետք է կիրառել զգույշ: Եթե խաղեր անցկացվեն յուրաքանչյուր պատեհ-անպատեհ առիթով, դրանք կարժեզրկվեն:

- Ցանկալի է, որ խմբերը փոքր լինեն

Խմբի փոքրաթիվ լինելը նպաստում է հանգիստ, ոչ ֆորմալ միջավայրի ստեղծմանը: Իհարկե, դերային խաղ կարելի է անցկացնել նաև համեմատաբար մեծ խմբում, այս դեպքում այն պետք է բաժանել փոքր ենթախմբերի, որոնցից յուրաքանչյուրին առանձին դեր է տրվում: Այս դեպքում ժամանակն այնպես է հաշվարկվում, որ փոքր խմբերի բոլոր անդամները կարողանան քննարկել իրենց ենթախմբի աշխատանքը մեծ խմբում:

- Ստեղծագործաբար կիրառել դերային խաղը

Ցանկալի է գործընթացն այնպես կառուցել, որ դերային խաղը հետևի տեսական մասին, ինչը հնարավորություն կտա գործնականում կիրառել նոր սովորած նյութը:

Ինչպես բաժանել դերերը

Կարելի է կիրառել մի քանի հնարներ.

- պատահական բաշխում,
- սկզբում բաժանել գլխավոր դերերը, իսկ մյուսները՝ ըստ ցանկության,
- դերերը տալ ըստ մասնակիցների՝ այդ դերին համապատասխանության,
- ընտրել այնպիսի մասնակիցների, որոնք ունեն առաջարկվող դերի հակառակ որակները,
- ընտրությունը թողնել մասնակիցներին,

Դերերը բաժանելու ձևը կախված է խաղի նպատակից և մասնակիցների խմբից:

Գծագրական դասակարգիչներ

Գծագրական դասակարգիչները մտածողության ընթացքը ակնառու դարձնելու միջոցներ են, որոնք օգտագործվում են դասի տարբեր փուլերում: Դրանցով առավել տեսանելի են դառնում հասկացություններն ու դրանց կապերը, իսկ քննարկումները՝ առավել շոշափելի և արդյունավետ: Գծագրական դասակարգիչների օրինակներ են T-աձև և m-աձև աղյուսակները, Վենի դիագրամը, պրիզման և այլն:

T-աձև աղյուսակ

T-աձև աղյուսակը օգտագործվում է միևնույն հասկացության երկու կողմերը համեմատելու համար: Սա գծագրական դասակարգիչներից ամենապարզն է և՛ կազմակերպական ձևով, և՛ կառուցվածքով: Այն կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Իր ձևով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ տարբեր պատասխանների (այո/ոչ, կողմ/դեմ) կամ համադրություն/ հակադրություն արտահայտող արձագանքների գրառման համար:

Դրական կողմեր	Բացասական կողմեր

m-աձև աղյուսակ

m-աձև աղյուսակը ևս գծագրական դասակարգիչ է, կառուցվածքով T-աձև աղյուսակի մեկ այլ տարբերակ, որը միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունք (դրական, բացասական, չեզոք) արտահայտելու հարմար միջոց է: Այն նույնպես կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Սա երեք բաժնից կազմված աղյուսակ է, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ դրական, բացասական կամ չեզոք դիրքորոշումները, բերվում են անհրաժեշտ փաստեր, տվյալներ և հիմնավորումներ: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երեք տարբեր պատասխանների (այո/ոչ/չգիտեմ, կողմ/դեմ/ձեռնպահ) կամ համադրություն/հակադրություն/չեզոք վերաբերմունք արտահայտող արձագանքների գրառման համար:

Օրինակ, սովորողները կարող են ևս մեկ անգամ անդրադառնալ T-աձև աղյուսակում ամփոփված խնդրին և վերանայել իրենց վերաբերմունքը՝ երկու բևեռներից բացի մի երրորդ՝ չեզոք դիրքորոշմամբ դիտարկելով այն:

Դրական կողմեր	Չեզոք կողմեր	Բացասական կողմեր

m-աձև աղյուսակը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս: Այն կարող է գործածվել թե' անհատական

աշխատանքի, թե՝ խմբային քննարկումների ժամանակ:

Վենի դիագրամ

Վենի դիագրամը կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Եթե փորձենք համեմատել Վենի դիագրամը T-աձև աղյուսակի հետ, ակնհայտ կլինի, որ Վենի դիագրամով հստակ առանձնացվում և կարևորվում են երկու (երեք...) հասկացությունների ընդհանրությունները և շեշտվում են յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունները:



Վենի դիագրամը կարող է ունենալ ինչպես պարզ կառուցվածք (երկու հասկացության համեմատության համար), այնպես էլ՝ բարդ (երեք - չորս հասկացությունների համեմատության համար):





Այն կարևոր համակարգող դեր ունի, օգտագործվում է նյութի ընդհանրացման և ամփոփման նպատակով և կիրառելի է բոլոր առարկաների համար:

Փոխգործուն նշանների համակարգ

Տեքստերի (հատկապես՝ սկզբնաղբյուրների) հետ արդյունավետ աշխատելու համար կարևոր է փոխներգործուն գրառումների համակարգի կիրառումը:

«Փոխներգործուն նշանների համակարգ» (ՓՆՀ) մեթոդը արդյունավետ է կարդալու միջոցով նյութի ընկալման ընթացքը վերահսկելու համար:

Ընթերցելով նյութը՝ սովորողները նշումներ են կատարում՝ օգտագործելով ՓՆՀ-ի հետևյալ նշանները.

V = հաստատում է իմ իմացածը (գիտեմ)

+ = նոր տեղեկատվություն է (չգիտեմ)

- = իմացածին հակասում է

? = անհասկանալի է

! = հետաքրքիր է, կարելի է քննարկել:

ՓՆՀ նշանների առատությունը արտահայտում է ընթերցողի ակտիվության աստիճանը և տեքստի հետ կատարած աշխատանքի արդյունավետությունը:

Նյութը արդյունավետ յուրացնելու համար օգտակար է, որ յուրաքանչյուր սովորող իր համար կատարի դասակարգում և կազմի աղյուսակ հետևյալ ձևով.

V	+	-	?	!

Այնուհետև կարելի է կազմակերպել զույգերով, խմբերով մտքերի փոխանակություն, նյութի քննարկում կամ բանավեճ:

Աղյուսակի երրորդ և չորրորդ բաժինները կարող են դիտարկվել որպես հանձնարարություն՝ այլ աղբյուրներից լրացուցիչ տեղեկատվություններ քաղելու և գիտելիքները խորացնելու համար:

Իրավունքի հիմունքներ» առարկայի կաբինետի կահավորումը և միջոցները

«Իրավունքի հիմունքներ» առարկայի դասավանդումը արդյունավետ կազմակերպելու համար ուսումնական հաստատությունում անհրաժեշտ է ունենալ համապատասխան կաբինետ: Վերջինս պետք է ապահովված լինի օրենսգրքերով, օրենքների, նորմատիվ իրավական այլ փաստաթղթերի ժողովածուներով, դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և այլ իրավաբանական գրականությամբ:

Կաբինետը պետք է ունենա նաև պլակատներ, դիագրամներ, գծապատկերներ և համանման այլ նյութեր: Դրանք կարող են լինել թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

Ժամանակակից էլեկտրոնային նյութերի բազայի ստեղծումը և դրա անընդմեջ թարմացումը էականորեն կբարձրացնի ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
3. Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգիրք:
4. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք:
5. Հայաստանի Հանրապետության վարչական օրենսգիրք:
6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված է 1998 թ.:
7. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված է 1998 թ.:
8. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք:
9. Հայաստանի Հանրապետության օրենքը երեխայի իրավունքների մասին. ընդունված է 1996թ.:
10. Հայաստանի Հանրապետության օրենքը բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին. ընդունված է 1996թ.:
11. Հայաստանի Հանրապետության օրենքը կրթության մասին. ընդունված է 1999թ.:
12. Հայաստանի Հանրապետության օրենքը սպառողների իրավունքների պաշտպանության մասին. ընդունված է 2001թ.:
13. Հայաստանի Հանրապետության օրենքը նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին. ընդունված է 2005թ.:
14. Հայաստանի Հանրապետության օրենքը տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին. ընդունված է 2005թ.:
15. Այվազյան Ն. և ուրիշներ, Հայաստանի Հանրապետության սահմանադրա-կան իրավունք, Երևան, Երևանի համալս. հրատ., 2008:
16. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, դասագիրք բուհերի համար, Երևան, Երևանի համալս. հրատ., 2006:
17. Խրոպանյուկ Վ. Ն., Պետության և իրավունքի տեսություն, Երևան, Գոշ, 1997:
18. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք. ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, խմբ.՝ Գ.Ս.Ղազինյանի, Երևան, Երևանի համալս. հրատ., 2007:
19. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն. ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, հեղինակային խմբի ղեկավար և խմբագիր՝ իրավ. գիտ. դոկտ. Գ.Ս.Ղազինյան, Երևան, Երևանի համալս. հրատ., 2006:
20. Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2007:

21. Հարությունյան Գ.Գ., «Իրավունք և երաշխիք...» (Սահմանադրական արդարադատության իրավունքը որպես մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար երաշխիք), Երևան, 1999: